այս խոտերու մէջ կանաչագոյն մարգերն, երփներանգ ծաղկունք քաղցր բուրմամբ զմարդ կարբեցնեն, կը յափշտակեն, ուր և կուզես փարիլ, գլորիլ, նստիլ, կանգնիլ, այս չքնաղ վայրերու մէջ կալ և մնալ՝ հաւատալով որ մշանջենական են սոյն տեսարանք և վայելչութիւնք, կարծելով թէ հարիւրաւոր սեւագոյն վրաններ մշտատև պիտի մնան ու զարդարեն այս հովիտս, միշտ պիտի տեսնես եզներ, կովեր, հորթեր, արջառներ, որք անհովիւ տարածուած են, երբեմն և ս անյայտացած խոտերի մէջ. մի խումբ առուներու եզերքն, մի այլ խումբ գետակի ափերը նստած հանդարտօրէն կորոճան, իսկ քանի կովեր ինքնագլուխ հեռանալով, հեւալով, փնչալով դանդաղաքայլ կը յառաջանան ծանրաբեռնեալ արածած կանաչեղինօք և հիւթալից կաթնով. կերթան սնունդ տալ հորթիկներուն և աւելորդ կաթն ընծայել տան տիկնոջ, իսկ քան զայս յառաջացած են մի այլ խումբ կովեր, բոլորուած այս կամ այն վրանի շուրջը. տանտիկինը կովկիթը ի ձեռին պըպզած կովի ոտների մէջ, բանասաեղծութիւններ յօրինելով քաղցրագոյնս կերգէ առ ի հաճոյս կովին, կը սեղմէ ստինքն, որ և շըչալով կը լեցուի կթոցն կաթնով և փրփուրով։

Աչքդ դարձուր միւս կողմ, այս տեղ ոչխարներ, գառներ, մի այլ ժայռերու մէջ այծեր փռուած են, հովուի քաղցրալուր սրինգը կառաջնորդէ նոցա, և որոց արձագանքէն լեռ ու ձոր կենդանութիւն կըստանան, ամեն վայր ծիծաղ կը տիրէ։

Երբ տեսար այս ամենը, տարուոյն այս եղանակը, ոսկիգդ ներքևէն Կալոյի յստակ ջուրն ոլորումներով կը գնայ. ծաղկունք որ երեսիդ կը ժպտին, արեգական առաւօտեան և երեկոյեան ճառագայթները ծաղկանց